

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗПЕТАРАН
АРМАВИРА

0901 ք. ԱՐՄԱՎԻՐ
ԱՐՈՎՅԱՆ-71
Հեռ.՝ 0237/2-37-16
Ֆաքս 010/28-06-46

0901. Գ. ԱՐՄԱՎԻՐ
Մ. ԱԲՈՎՅԱՆ - 71
Тел. 0237/ 2 – 37 – 16
Факс. 010/ 28-06-46

<< ----- >>----- 2017թ. թիվ _____

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի «Հետք»
թերթի խմբագիր պարոն Է.Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 16.05.2017թ. հարցմանը, հայտնվում է.

ա) Խմելու ջրամատակարարման բնագավառ

1. ՀՀ Արմավիրի մարզում խմելու ջուր չունեն Տարոնիկ, Բագարան, Կողբավան համայնքները և Քարակերտ համայնքի հինգ հարկերի փողոցի N1 շենքը:

3. Մարզպետարանի կողմից կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ այդ համայնքներում ջրամատակարարման համակարգի իրականացման հնարավորությունների վերաբերյալ, համաձայն որի՝

Տարոնիկ համայնքի և Քարակերտ համայնքի հինգ հարկերի փողոցի N1 շենքի ջրամատակարարման հարցերը կարգավորելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից խնդիրները ներառվել են 2017թ իրականացվելիք հրատապ ծրագրում, կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթերը և օրենսդրությամբ սահմանված կարգով կսկսվեն աշխատանքները:

Բագարան համայնքի տարածքում բնակավայրից 7 կմ հեռավորության վրա «Ղարաբաղ» կոչվող տարածքում կան 3 ջրաղբյուրներ, որոնց ջրի պաշարներով հնարավոր է համայնքը ապահովել ինքնահոս ջրամատակարարումով:

Կողբավան համայնքի խմելաջրի հարցը հնարավոր է կարգավորել՝ ջուրը բերելով Երվանդաշատ համայնքից, շուրջ 13 կմ հեռավորությունից: Համայնքների բարձրությունների նիշերի տարբերությունը շուրջ 220մ է և անհրաժեշտ կլինի կառուցել ՕԿՋ, պոմպերով ջուրը մղել ՕԿՋ և բաշխել:

Մարզում համապատասխան ծրագրերի առկայության դեպքում լուծում կտրվի նաև Բագարան և Կողբավան համայնքների ջրամատակարարման համակարգերի իրականացման խնդիրներին:

4. Քարակերտ համայնքի ջրամատակարարումը իրականացվում է «Վիոլա Ջուր» ՓԲ ընկերության կողմից, Տարոնիկ, Բագարան, Կողբավան համայնքների ջրամատակարարումը իրականացվում է համայնքապետարանի կողմից՝ ջրատար մեքենաների միջոցով:

բ) Ոռոգման բնագավառ

2. Արմավիրի մարզում չկան համայնքներ, որոնք ընդհանրապես չունեն ոռոգման ջուր: Ոռոգման կանոնավոր ջրամատակարարումը հիմնականում պայմանավորված է մարզը սնուցող գետերում և ջրամբարներում ջրային ռեսուրսների բավարար պաշարների առկայությունից, որը

հատկապես ընդգծված է արտահայտվում սակավաջուր տարիներին: Գլոբալ իմաստով ոռոգման կանոնավոր ջրամատակարարման խնդիրներ կան Ակնալիճ, Զարթոնք, Արռաշար, Եղեգնուտ, Երասխահուն, Լուսազյուղ, Ակնաշեն, Հայկաշեն, Ապագա, Զրառատ, Զրարբի, Արաքս/Էջմ./ Տարոնիկ, Գայ, Գրիբոյեդով համայնքներում, որը կապված է Մեծամոր գետի աստիճանական ցամաքեցման և ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցման հետ:

3.Մարզպետարանի կողմից կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ և առանձնացվել են այն աշխատանքները, որոնց իրականացման դեպքում զգալիորեն կբավարարվի ջրամատակարարումը և կորուստները կհասցվեն մինիմումի:

Բաղրամյանի տարածաշրջանի համայնքները սպասարկում է <<Շենիկ>> ԶՕԸ-ն. Իսկ Արմավիրի և Էջմիածնի տարածաշրջանի համայնքները սպասարկում է <<Արմավիր>> ԶՕԸ-ն:

Առդիր՝1էջ:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատ՝ Կ.Դանիելյան
Ա.Այվազյան

Տեղեկանք

2016թ Ոռոգման համակարգերում հրատապ լուծում պահանջող աշխատանքների

ԶՕԸ-ի անվանումը	ջրանցքների վերակառուցում, երեսպատում և խորավազարի կառուցում		խորքային հորերի վերանորոգում		խորքային պոմպերի (հատ)	խորքային հորերի հորատում		Այլ միջոցառումներ
	համայնքների թիվը	ջրանցքի երկարությունը կմ	համայնքների թիվը	քանակը հատ		համայնքների թիվը	քանակը հատ	
1 Արաքս	12	22,45						
2 Մերձափնյա	7	8,2	6	6	5			Եղեգնուտ համայնքը ապահովել ինքնահոս ոռոգման ջրով
3 Արմավիր	3	4,2	8	8		1	1	
4 Խոյ	12	92,6	1	4		1	5	Արագածի 45 հա ոռոգման համար կառուցել 1 պոմպակայան
5 Վարդարշապատ	1	0,65	2	2				Ապագայում և Լուսապուրում 2 պոմպակայանների կառուցում
6 Սեվ ջուր-Այս Թամար	6	39,18	5	14		2	3	
7 Շենիկ	8	39,2						10մ/ն մետր խորհանարդ տարրորոշամբ սեյսմո-մաստաբա ջրամբարի կառուցում
ընդամենը	49	206,48	22	34	5	4	9	